ՀԱՅ

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

BY NC SA

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. (Բ.) Կ. ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՆԳԵՂՋԲԱԺՆԻ

1270ր
121
A I/8359

# ՔԱՂԱՔԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
# ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1929

Հրատ. № 1122

ՊԵՏՀՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրաոնեպ. № 2867 (բ) Տիրաժ 400 Պատվ. 1186

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏԳԱ-ՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Ներկա տարում բանվորուհիների պատգամավորական ժողովի ծրագիրը վորոշ վերամշակման ե յենթարկված շնորհիվ XVI կուսկոնֆերանսի վորոշումների և այն խնդիրների, վորպիսիք խորհրդային յերկրի բանվոր դասակարգի առաջն են դնում մեր ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի հաջող կատարման պայմանները։*

*«Կուսակցության և բանվորուհիների ու գեղջկուհիների լայն զանգվածների կապի ամենից ավելի տարածված ձևը և կին-ակտիվի նախապատրաստման գործնական շկոլան հանդիսացող պատգամավորական ժողովների աշխատանքը մաքսիմալ չափերով պետք ե հարմարեցվի բանվորուհիների և գեղջկուհիների լայն զանգվածների աճող ակտիվության մոբիլիզացման և կազմակերպչական ամրապնդման հիմնական խնդրին» (ՀամԿ(բ.)Կ բանվորուհիների և գեղջկուհիների մեջ կուսակցության կատարելիք աշխատանքի հերթական խնդիրների մասին 1929 թվի հունիսի 20-ին հանած վորոշումներից)։*

Դրա հետեվանքով տնտեսական յեվ պետական շինարարության բոլոր բնագավառներում բանվորուհիների ներգրավումն ուժեղացնելու, ինչպես նաև ավելի մեծ չափերով նրանց կուսակցության մեջ ներգրավելու ան-

հրաժեշտությունը առաջին նշանակություն է տալիս պատգամավորական ժողովների աշխատանքի գործնական կողմին յեվ առաջին պլանի վրա յե մղում այն։

*Բայց և այնպես դա ամենևին չի նշանակում, վոր ծրագրային աշխատանքը պետք է մեկուսացվի գործնական աշխատանքից։*

Պատգամավորական ժողովի ծրագրային աշխատանքը լրացնում է պատգամավորուհիների գործնական աշխատանքը, ձեվակերպելով յեվ ընդհանրացնելով այդ աշխատանքից քաղված փորձը։

*Ծրագրում վերհիշված զրույցների շատությունը հաճախ պատճառ էր դառնում այն բանի, վոր ժամանակ չէր մնում պատգամավորական ժողովում մշակելու կյանքի առաջադրած հարցերը կամ հերթական քաղաքական կամպանիաների խնդիրները։ Նման դեպքերում պատգամավորական ժողովը մեկուսանում էր այն ամենից, ինչ վոր ակտյալ մոմենտում հուզում էր վողջ բանվորությունը։ Ժողովների քչությունն ըստ այս ծրագրի պատգամավորական ժողովները դարձնում է ավելի ճկուն և ժամանակ թողնում պատգամավորական ժողովի աշխատանքի մեջ մի շարք լրացուցիչ հարցեր ավելացնելու համար։*

*Այդ պատճառով ժողովների քանակն այս տարվա ծրագրում կրճատել ենք և հասցրել ինների (փոխանակ տասնմեկի, ինչպես անցյալ տարի յեր)։*

*«Ո՞ւմ է պետք ժողովուրդների թշնամությունը» թեմայի հարցերը փոխադրել ենք մասամբ 6-րդ ժողովի («Ի՞նչպես է բանվոր դասակարգը վարում մեր պետությունը») և մասամբ էլ («Ազգային թշնամությունը») 7-րդ ժողովի («Հանուն կուլտուրայի, հանուն*

նոր կենցաղի») աշխատանքներում։ Իսկ անցյալ տարվա ծրագրի 11-րդ ժողովի թեման—«Աշխատավորուհու դրությունը կապիտալիստական յերկրներում»—բոլորովին հանել ենք նոր ծրագրից, քանի որ այդ հարցերը հիմնականում մշակվում են մարտի 8-ի և մայիսի 1-ի կամպանիաների ընթացքում։

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը պատճառ է դառնում հաղթահարված կապիտալիստական դասակարգերի կատաղի ընդդիմադրությանը։ Իմիջի այլոց դա դրսևորվում է նաև այն բանում, որ մեր թշնամի տարրերն ուժեղացնում են ազգայնականության կրոնական նախապաշարումների օգտագործման աշխատանքը։ Ամեն տիպի յեկեղեցականներն ու աղանդավորները պայքար են մղում մասսաների տրամադրությունն իրենց կողմ գրավելու համար։ Դրա համար էլ մենք այս ծրագրում տալիս ենք յերկու հակակրոնական զրույցի պլան, առանց այն պարտադիր դարձնելու։ Այս զրույցները մշակման են յենթարկվելու այնտեղ, ուր դա հնարավոր է, և ուր կան համապատասխան պատրաստության տեր զեկուցողներ։

Այս տարի ծրագրի շուրջ «մատերիալներ» չեն հրատարակվելու։ Մի խոշոր մասի համար կարելի յե օգտագործել 1928 թվին հրատարակված «Մատերիալներ և մեթոդական ցուցմունքներ բանվորուհիների պատգամավորական ժողովի ծրագրային և գործնական աշխատանքի շուրջ» ձեռնարկը։ Բայց յուրաքանչյուր զրույցի համար հիմնական գրքավորում պետք է ստանա ղեկավարը տվյալ թեմային կից մատնանշված գրականությունից։ Ղեկավարին օժանդակելու

համար կազմվելու յե յուրաքանչյուր թեմայի հիմնական հարցերի լուսաբանման աղբյուր հանդիսացող ձեռնարկների մի փոքրիկ գրադարան, ինչպես նաև հրատարակվելու յեն դիագրամմաներ և պլակատներ։

Պատգամավորական ժողովների համար պետք է մատակարարել թե ակնատու պիտույքներ և թե Պետհրատի կազմած փոքրիկ գրադարաններ։

Զրույցներն անցկացնելու նախապատրաստության համար պատրաստի մատերիալներով հանդես գալու փոխարեն նշված ձեռնարկներից օգտվելու անհրաժեշտությունը կստիպի, որ ղեկավարներն իրենց վրա ավելի շատ աշխատեն, ավելի շատ խորասուզվեն զրույցի բովանդակության մեջ և հստակ մշակման յենթարկեն նրա պլանը։

## ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ

Կուսակցության և խորհրդային իշխանության առաջ դրված են արդյունաբերության և գյուղատնտեսության վերակառուցման ամենաբարդ խնդիրներ։ Այնպիսի չափերի հասցնել յերկրի ինդուստրիացումը, որ հնարավոր լինի հասնել և անցնել կապիտալիստական յերկրներին, հաղթահարել մեր տնտեսական շինարարության մեջ կապիտալիստական տարրերին,— դա հնարավոր է միայն բանվոր դասակարգի ամենաակտիվ մասնակցությամբ։

Արթնացնել բանվորուհիների այդ ակտիվությունը, գործնականորեն սովորեցնել նրանց, թե ինչպես և ինչով պետք է աջակցի բանվորուհին կուսակցու-

թյանը և խորհրդային իշխանության տնտեսական շինարարության մեջ, — ահա պատգամավորական ժողովի հիմնական նպատակը։

Ժողովրդական տնտեսության մեծ վերակազմությունը պահանջում է վողջ պետական ապարատից հարմարեցումն այդ աշխատանքին, հետևաբար և վըճռական պայքար բյուրոկրատիզմի դեմ։ Պատգամավորական ժողովների միջոցով է, վոր բանվորուհիներին պետք է ներգրավել վողջ պետական ապարատի բարեփոխման և բյուրոկրատիզմի վերացման համար վարելիք պայքարում։

Պատգամավորական ժողովը վոչ միայն պիտի ոգնի, վոր պատգամավորուհին գիտակցաբար ըմբռնի թե համայն ժողովրդական տնտեսության և թե իր ձեռնարկության հնգամյա պլանի խնդիրները, այլև գործնականում պետք է ցույց տա, թե ինչպես կարող է բանվորուհին ոժանդակել այդ պլանի հաջող կատարման գործին։

Այժմ ավելի քան յերբևիցե պատգամավորական ժողովը պետք է դառնա մասսայական հասարակական մի միավոր, ամեն տեսակ խոցերի ու բացերի հայտաբերման, խափանման և վերացման լծակներից մեկը, կուսակցության գործուն ոժանդակը՝ բանվորուհիների բովանդակ մասսան սոցիալիստական շինարարության աշխատանքի մեջ ներգրավելու գործում։

Պատգամավորական ժողովը պետք է գրավի բանվորուհիներին գործնական մասնակցություն բերելու կուսակցության և խորհուրդների առաջ կանգնած բոլոր հերթական խնդիրների լուծման մեջ (ինքնարժեքի իջեցումը, կռիվ պրոգուլների դեմ, աշխատանքի

արտադրողականության բարձրացումը, ձեռնարկությունների տեխնիկական վերասարքավորման աջակցելը և այլն)։

Ավելի ևս խորանում է պատգամավորական ժողովի նշանակությունն այն իմաստով, վոր նա նախապատրաստական մի աստիճան է դառնում լավագույն արտադրական բանվորուհիներին ջոկելու և կուսակցության մեջ ընդունելու համար նախապատրաստելու գործում։ Շնորհիվ կենտկոմի նոյեմբերյան պլենումի՝ բանվորներին կուսակցության մեջ հավաքագրելու մասին ընդունած վորոշմանը, պատգամավորական ժողովի աշխատանքների այս կողմը հատուկ նշանակություն է ստանում և պետք է ամեն կերպ բարելավվի։

Սկսած առաջին իսկ ժողովից մինչև վերջինը ղեկավարը չպետք է աչքից բաց թողնի պատգամավորական ժողովի վերջնական նպատակը, այն է՝ լավագույն արտադրական բանվորուհիներին նախապատրաստելու և կուսակցության մեջ գրավելու խնդիրը։ Այդ նպատակի իրագործումը պետք է դառնա այն առանցքը, վորի շուրջ ծավալվելու յեն պատգամավորական ժողովի վողջ աշխատանքը։

Սոցիալիստական վերակառուցման դժվարությունները հաղթահարելու և ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի հաջող կատարմանն աջակցելու նպատակով բանվորուհիների ակտիվության մոբիլիզացման յենթարկելու խնդիրն անհրաժեշտ է դարձնում, վոր ստուգման յենթարկվի պատգամավորական ժողովների վողջ աշխատանքը, հիմք ունենալով նախորդ տարիների փորձի հաշվա-

ումը և ներկա տարում պատգամավորական ժողով-ների աշխատանքն ավելի շատ համապատասխանեցվի նրանց առաջ դրված խնդիրներին։

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատգամավորական ժողովի ամբողջ աշխատան-քի ղեկավարությունն ընկնում ե ձեռնարկության բջջի վրա։ Բջիջը միայն կարող ե ստեղծել այնպիսի մի դրություն, վոր պատգամավորական ժողովն իս-կապես կուսակցության հենարանը և աշխատավորու-հիների ամբողջ զանգվածի ակտիվությունը սոցիա-լիստական շինարարության համար կազմակերպելու ընդունակ հասարակական մի միավոր դառնա։

Պատգամավորական ժողովի աշխատանքի նա-խորդ տարին ցույց տվեց, վոր աշխատանքի ղեկավա-րությունը ագիտ-պրոպ կազմակերպիչների և ձեռնար-կությունների բջիջների բյուրոների կողմից յեղել ե անբավարար։ Պատգամավորական ժողովի ղեկավարու-թյունը հաճախ ամբողջապես թողնել ե բջջի կին-կազմա-կերպչի ուսերի վրա։ Իբրև հետևանք ստացվել ե այն, վոր պատգամավորական ժողովը չի յեղել այն, ինչ պետք ե լիներ։ Այսպիսով, բջիջների բյուրոների ու-շադիր վերաբերմունքն ու անմիջական ղեկավարու-թյունը պատգամավորական ժողովի աշխատանքի դըր-ման ամենաանհրաժեշտ և առաջին պայմաններն են հանդիսանում։

Իր աշխատանքի առաջին իսկ օրերից ղեկավարը պետք ե կապվի ագիտ-պրոպ կազմակերպչի հետ և

նրան մասնակից դարձնի պատգամավորական ժողովի աշխատանքի քննարկմանը։ Այս տարի պատգամավորական ժողովները մեծ պահանջներ են առաջադրելու նաև ղեկավարների նկատմամբ։ Անհրաժեշտ է միանգամայն հրաժարվել այն մտքից, թե ղեկավարը պատգամավորական ժողովի զրույցի ծրագրային մասն է անցնելու միայն։ Պատգամավորական ժողովի աշխատանքների ամբողջ պրակտիկան հաստատում է այն բանի անհրաժեշտությունը, որ ղեկավարը պետք է լինի բջջի և կին կազմակերպչի ամենամոտիկ օգնականը պատգամավորական ժողովի վողջ աշխատանքի ընթացքում։ Կին-կազմակերպչի հետ միասին նա կազմում է պատգամավորական ժողովի աշխատանքների պլանը, նշում է գործնական զեկուցումները, զեկուցողի հետ միասին կազմում է զեկուցման պլանը, ներկա է լինում զեկուցման ժամանակ, օգնում է զեկուցողին զրույց կազմակերպելիս և օգտագործում է գործնական զրույցների նյութը պատգամավորական ժողովի հետագա աշխատանքներում։

Ղեկավարը պետք է իրազեկ լինի գործնական աշխատանքների համար խորհրդային և հասարակական կազմակերպություններին կցված պատգամավորուհիների, ինչպես նաև պատգամավորական ժողովին կից սեկցիաների աշխատանքներին։ Դա հնարավորություն կտա նրան իր ժամանակին կին-հանձնաժողովների և բջջի առաջ դնելու պատգամավորական ժողովի աշխատանքներին վերաբերյալ այս կամ այն հարցերը, վորոնք շուտափույթ կատարում են պահանջում։ Այս պայմանով է միայն, վոր ղեկավարը կկարողանա իրական աջակցություն ցույց տալ բջջին՝

պատգամավորական ժողովն իբրև հասարակական մի միավոր ձևակերպելու խնդրում։

Մինչև այժմ, չնայած նրան, որ պատգամավորական ժողովը հաստատուն տեղ է գրավել կուս-դաստիարակչական աշխատանքի ընդհանուր սիստեմում, չնայած նրան, որ պատգամավորական ժողովներով անց են կենում ամեն տարի տասնյակ հազարավոր բանվորուհիներ, կուսակցական կոմիտեների ագիտպրոպ բաժինները, պատգամավորական ժողովների ղեկավարներ ընտրելիս, մի շարք դեպքերում հարկ են համարում այդ աշխատանքի համար հատկացնել ավելի սակավ պատրաստության տեր ընկերների, որոնք միաժամանակ նաև ծանրաբեռնված են մի ամբողջ շարք այլ կուսակցական և հասարակական պարտականություններով։

Այս տարվա ծրագրերում համապատասխան մատերիալների բացակայությունը պարտականություն է դնում կուս-կոմիտեների ագիտպրոպբաժինների վրա բանգեղջբաժինների հետ միասին առանձին խնամքով վերանայել պատգամավորական ժողովների ղեկավարների կազմը և ըստ հնարավորության լավ կադրեր առաջադրել։

Որպեսզի ղեկավարի համար ավելի հեշտ լինի ընդգրկել պատգամավորական ժողովի աշխատանքների ամբողջ կառուցվածքը, անհրաժեշտ է, որ կուս-կոմիտեները ղեկավարներին կցեն տվյալ ձեռնարկություններին դեռ նախքան պատգամավորական ժողովի վերընտրությունը, այն նպատակով, որ ղեկավարը մասնակցի վերընտրական կամպանիային և հնարավորություն ունենա նախքան պատգամավորական

ժողովի աշխատանքներն սկսելը ծանոթանալ ձեռնարկության հետ ու կին-հանձնաժողովներում նախորոք քննարկել պատգամավորական ժողովի աշխատանքները։ Ինչքանով վոր պատգամավորական ժողովը աշխատանքի մի այնպիսի հատուկ ձև է, վոր ղեկավարից բավականին շատ ժամանակ և ձեռնարկության հետ ավելի մեծ կապվածություն է պահանջում, քան կուս-ուսուցման մյուս տեսակները, ուստի ցանկալի յե, վոր պատգամավորական ժողովի ղեկավարն ամրացվի ձեռնարկության բջջին պատգամավորական ժողովի ամբողջ աշխատանքի ընթացքում։ Ավելի լավ, յեթե հնարավոր լինի ղեկավար նշանակել ձեռնարկության աշխատակիցներից մեկին։

Ղեկավարներին ոգնության պիտի գան նրանց աշխատանքի մեջ պատգամավորական ժողովների ղեկավարների պրոպագանդիստական կոլլեկտիվները և մեթոդական բյուրոները, վորպիսիք այժմ գրեթե ամենուրեք պետք է կազմակերպվեն ագիտպրոպ և բանգեղջբաժինների կողմից։ Բոլոր այն տեղերում, ուր մեթոդական բյուրոների աշխատանքը կարգավորված է յեղել, ղեկավարները նրանցից ստացել են վորոշ մեթոդական աջակցություն պատգամավորական ժողովների ղեկավարման խնդրում։ Ղեկավարը, ինչքան էլ վոր նա ծանրաբեռնված լինի, պետք է գնա պրոպագանդիստական կոլլեկտիվը և քննարկման ներկայացնի այնտեղ իր աշխատանքի ընթացքում հանդիպած դժվարությունները։

Այս ղեկավարությունը պետք է նախատեսի համապատասխան աշխատանք ինչպես բարձրորակ պատրաստության տեր ղեկավարների նկատմամբ, վորոնց

լով մեթոդական ղեկավարություն է պետք, այնպես էլ ավելի քիչ պատրաստության տեր ղեկավարների նըկատմամբ, վորոնց վոչ միայն մեթոդական ղեկավարություն է պետք, այլև ծրագրերի բովանդակության գծով ղեկավարություն։

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Պատգամավորուհիների գործնական աշխատանքը պատգամավորական ժողովի աշխատանքի ամբողջ սիստեմի հիմնական և կարևորագույն մասն է հանդիսանում։ Պատգամավորուհիների առաջին իսկ կազմակերպչական ժողովում հարկավոր է յուրաքանչյուրին ըստ ցանկության նշանակել այս կամ այն գործնական աշխատանքին, այն է՝ կցել խորհրդի սեկցիաներին, բաժանել պատգամավորական ժողովին կից սեկցիաների վրա, կցել գործնական աշխատանքի ֆաբգործտեղկոմներում և նրանց հանձնաժողովներում, խանութային հանձնաժողովներում և այլն։ Հերթափոխությամբ աշխատող ձեռնարկություններում պատգամավորուհիներին խորհրդի սեկցիաներին կցելու հարցն առանձնապես քննության պետք է առնվի, վորովհետև սեկցիաների աշխատանքը հերթափոխման հետ չի հարմարեցրած։ Այս տեսակետից ավելի հարմար է պատգամավորուհիներին գործնական աշխատանքի կցել հենց տվյալ ձեռնարկության ներսում։

Այնուամենայնիվ, պատգամավորուհիներին գործնական աշխատանքի կցելու հարցը պետք է քննարկվի կին-հանձնաժողովներում նախքան պատգամավոր-

բակյան ժողովի աշխատանքներն սկսելը, ղեկավարի և ազիտպրոպ կազմակերպչի ներկայությամբ։ Հարկավոր է միայն ձգտել, վոր պատգամավորուհիներն իրոք ոգտագործվեն գործնական աշխատանքների համար։ Սակավ չեն այնպիսի դեպքեր, յերբ գործնական աշխատանքի կցումը ձեռնարկության ներսում պատգամավորուհիներին վոչ մի արդյունք չի տալիս, քանի վոր այն կազմակերպությունները, վորոնց նրանք կցված են, պատգամավորուհիներին աշխատանքի չեն լծում։

Պատգամավորական ժողովի գործնական աշխատանքների շարքին է պատկանում նաև հենց պատգամավորական ժողովում գործնական դեկուցումներ դնելը, քանի վոր այդ գործնական հարցերը շատ հաճախ դրվում են վոչ միայն աշխատանքի այս կամ այն բնագավառի ղեկավարի, այլև պատգամավորուհիների այս կամ այն խմբակի միջոցով։

Պատգամավորական ժողովների աշխատանքում մեծ տեղ պետք է գրավի պատգամավորուհիների հաշվետվությունը։ Աշխատանքի այս մասի վրա ղեկավարները սովորաբար չափազանց փոքր ուշադրություն են դարձնում։ Այնինչ դա անկասկած կարող է ծառայել իբրև գեղեցիկ մի միջոց՝ իրականացնելու համար մասսաների հսկողությունն ու քննադատությունը վոչ միայն իրենց առաջ քաշվածների, իրենց պրակտիկանտների աշխատանքների նկատմամբ, այլև այն կազմակերպությունների և ձեռնարկությունների, վորոնց կցված են պատգամավորուհիները։ Այդ նույնպես պետք է նախատեսել աշխատանքի պլանում։

Մեծ նշանակություն ունի նույնպես առաջարկ-

ների ընդունումը պատգամավորական ժողովում, որպես հետևանք անցկացված պարապմունքի։ Առաջարկները պետք է ունենան խիստ գործնական և կենսական բնույթ։ Ղեկավարը պետք է հետևի, որ այն պատգամավորուհիները, որոնց հանձնարարված է առաջարկներ անցկացնելը, իսկապես գործը գլուխ բերեն և պատգամավորական ժողովին հաղորդեն իրենց աշխատանքի արդյունքների մասին։

Պատգամավորական ժողովի ամբողջապես ձևակերպված աշխատանքը միայն,—ծրագրային և գործնական հարցերը, պատգամավորուհիների գործնական աշխատանքը, մշակված, ընդունված և կյանքում կիրառված բանաձևերը,—կտա հարկ չեղած արդյունքը և կիրագործի պատգամավորական ժողովի առջև դրված խնդիրները։

Անուշադիր վերաբերմունքը պատգամավորական ժողովի որոշումների նկատմամբ և այնպիսի մի աշխատանք, որ կատարվում է տվյալ պլանի սահմանափակ շրջանակներում միայն, առանց հաշվի առնելու այն հուզող հարցերը, որը պատգամավորուհիների առաջն է դնում ձեռնարկության կյանքը,—պատճառ են դառնում պատգամավորուհիների պասսիվության։ Ահա թե ինչու անհրաժեշտ է աշխատանքի ամբողջ սիստեմի չափազանց խորը մտածվածություն, պատգամավորուհիների մեջ և ընդհանրապես ամբողջ պատգամավորական ժողովում ակտիվ տրամադրություն ստեղծել կարողանալու համար։

# ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ ԿԻՑ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ

1928/29 թվերում մենք տվել ենք հետևյալ սեկցիաների ծրագրերը — պրոֆմիութենական, կոոպերատիվ, մայրության և մանկության պաշտպանության, արդյունաբերական, իրավական-կենցաղային և մամուլի։ Այս սեկցիաների ծրագրերն ընդհանրապես մընում են անփոփոխ, բայց յուրաքանչյուր սեկցիայի ղեկավարը պետք է հաշվի առնի կուսակցության և խորհրդային իշխանության վերջին հիմնական վորոշումները անտեսության այն բնագավառի նկատմամբ, վորին վերաբերում է տվյալ սեկցիան, և նկատի ունենալ նրանք իր աշխատանքի ընթացքում։ Վերամըշակման է յենթարկված կոոպերատիվ սեկցիայի ծրագիրը, վորն առանձին բրոշյուրով լույս է տեսնելու Ցենտրոսոյուզի հրատարակությամբ։ Կոոպերատիվ սեկցիաների ղեկավարների համար անհրաժեշտ է ունենալ այդ բրոշյուրը։

# ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԾՐԱԳԻՐԸ

## ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎ

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ—«ՄԵՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ»

1. Խորհրդային պետական ձեռնարկության տարբերությունը կապիտալիստական ձեռնարկություններից։ Վաստակը և նրա օգտագործումը կապիտալիստական ձեռնարկության և հետևողական-սոցիալիստական տիպի խորհրդային ձեռնարկության մեջ։

2. Բանվորական մասսաների շահագրգռվածությունն ու մասնակցությունն իրենց ձեռնարկության և ԽՍՀՄ բովանդակ արդյունաբերության մեջ։ Արտադրական խորհրդակցությունների և սոցիալիստական մրցության միջոցով այդ զարգացմանն ակտիվ մասնակցություն բերելը։

Սոցիալիստական մրցությունը վորպես միջոց բանվոր-բանվորուհիների ինքնագործունեության ու նախաձեռնության կազմակերպման և նրանց աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխատանքային դիսցիպլինայի ամրապնդման, արտադրության ռացիոնալացման և արտադրանքի ինքնարժեքի իջեցման ուղղությամբ կատարվող աշխատանքների մեջ ներգրավելու համար։

*Բանվորուհիներին մասնակից դարձնել ինքնաքննադատությանը և ձեռնարկության թերությունների հայտաբերման ու վերացման գործին։*

*3. Ձեռնարկության համկ(բ)կ բջիջը, նրա ղեկավար դերը և փոխհարաբերությունները գործկոմի և դիրեկտորի հետ։ Պատգամավորուհու և ընդհանրապես պատգամավորական ժողովի դերը բջջի և գործկոմի աշխատանքում։*

Գործնական նյութ—Տպագործեղկոմի զեկուցումը «Սոցիալիստական մրցության մեջ մեր ձեռնարկության բերած մասնակցության հետեվանքները» թեմայի շուրջ։

**Զեկուցման որինակելի սխեման**

*1. Սոցիալիստական մրցության առաջ բերած խնդիրները։*

*2. Ինչպես և կազմակերպվել սոցիալիստական մրցությունը տվյալ ձեռնարկության մեջ։*

*3. Ինչպիսի ակտիվությամբ են մասնակցում սոցիալիստական մրցության բանվոր-բանվորուհիները։*

*4. Ինչպիսի կոնկրետ արդյունքներ է տալիս սոցիալիստական մրցությունը՝*

*ա) աշխատանքի արտադրողականության բարձրացման,*

*բ) ինքնարժեքի իջեցման,*

*գ) արտադրանքի վորակի լավացման,*

*դ) արտադրանքի փչացումների նվազեցման,*

*ե) աշխատանքային դիսցիպլինայի և պրոգուլների դեմ պայքարելու,*

դ) բանվորների ուշադրությունը արտադրության լավացման հարցերի շուրջ կենտրոնացնելու ասպարեզներում։

Նայած տեղական պայմաններին, կարելի յե դնել դիրեկտորի զեկուցումը 7-ժամյա բանվորական օրվա անցնելու կամ այդ ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ կատարելու մասին։ Կարելի յե եքսկուրսիա կազմակերպել պատգամավորուհիների համար ձեռնարկության մեջ։

### ՅԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎ

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ—«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

1. Տվյալ ձեռնարկության կապը ԽՍՀՄ արդյունաբերության հետ։ Պետական արդյունաբերության տեսակարար կշռի փոփոխությունը ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսության մեջ հնգամյակի վերջում։ Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը վորպես սոցիալիստական ծավալուն գրոհի ծրագիր։

2. ԽՍՀՄ ինդուստրիացումը վորպես ԽՍՀՄ տեխնիկական զարգացման և տնտեսական անկախության ու պաշտպանունակության ապահովման գլխավոր գիծ։

Խոշոր պետարդյունաբերության առաջնորդիչ դերը ամբողջ տնտեսության տեսակետից։ Կապիտալ շինարարությունը հնգամյա պլանում։

Ինդուստրիացման աղբյուրները։ 7-ժամյա բանվորական օրը, արտադրության ռացիոնալացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը

(110%-ով հնգամյակի վերջում) և արդյունաբերական արտադրանքի իջեցումը (35%-ով առաջին հնգամյակում) արդյունաբերության զարգացման բնագավառի հանգուցային խնդիրներն են ըստ հնգամյա պլանի։

3. Բանվոր դասակարգի աճումն ըստ հնգամյա պլանի։ Գործազրկության կրճատման հեռանկարները հնգամյակում։ Բանվոր դասակարգի կենսական և կուլտուրական մակարդակի բարձրացման հեռանկարները (արդյունաբերական բանվորների ռեալ աշխատավարձի 71%-ով բարձրացումը հնգամյակի վերջում)։ Բանվորական կադրերի նախապատրաստությունը սոցիալիստական վերակառուցման պայմաններում։ Կանանց աշխատանքի վորակավորման բարձրացումը՝ առաջին հնգամյակում բանվորուհիներին արտադրության մեջ ներգրավելու խնդիրների կապակցությամբ։

Գործնական հարց—ձեռնարկության դիրեկտորի զեկուցումը «Հնգամյակի առաջին տարվա կատարման արդյունքները տվյալ ձեռնարկության մեջ» թեմայի շուրջ։

### Զեկուցման որինակելի սխեման

1. Ի՞նչ է կատարված ռացիոնալացման նշված պլանից տվյալ ձեռնարկության մեջ. Կոնկրետ՝ ռացիոնալացման արդյունքները արտադրանքի ինքնարժեքի նշված իջեցման, վաստակի ավելացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, վերադիր ծախքերի կրճատման, բանվոր-բանվորուհիների ռեալ աշխատավարձի բարձրացման և բանվոր-բանվորուհիների կուլտուրական ու կենցաղային պայմանների բարելավման տեսակետներից։

2. Բանվոր-բանվորուհիների մասնակցությունը արտադրության ռացիոնալացում անցկացնելու գործում (արտադրական խորհրդակցությունների, հանձնաժողովների, սոցիալիստական մրցության և այլ ձեռնարկումների միջոցով)։ Ռացիոնալացման վերաբերյալ բանվոր-բանվորուհիների կողմից մտցված առաջարկների քանակն ու բնույթը։ Ի՞նչ չափով են կենսագործվում այդ առաջարկները։

3. Տվյալ ձեռնարկության հետագա զարգացման հեռանկարներն ու գործնական խնդիրները 1929/30 տնտեսական տարում։ Ի՞նչպես կարող են պատգամավորուհիներն ոժանդակել նշված պլանի հաջող կատարման գործին ներկա տնտեսական տարում։

Նայած տեղական պայմաններին կարելի յե դնել նաև հետևյալ գործնական հարցերը — փարգործտեղկոմի զեկուցումը՝ սոցիալիստական վերակառուցման հետևանքով համապատասխան բանվորական կադրեր նախապատրաստելու մասին, կամ թե աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի զեկուցումը տվյալ ձեռնարկության կանանց աշխատանքի պաշտպանության մասին՝ ռացիոնալացման կապակցությամբ։

## ՉՈՐՐՈՐԴ ԺՈՂՈՎ

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ — «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԿԱՊԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏ

1. Գյուղատնտեսության բաժանվածությունն ու տեխնիկական հետամնացությունը վորպես նրա զարգացման տեմպի յետ մնալու և նրա ծայրաստիճան ցած

արտադրանքայնության պահանջը։ Գյուղատնտեսության զարգացման տեմպի անչափ հետամնացությունը ինդուստրիայի զարգացման տեմպից համեմատությամբ հումքային և պարենավորման դժվարությունների աղբյուրն է հանդիսանում։

2. Կուսակցության և խորհրդային իշխանության գիծը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդրում։ Խոշոր հասարակական գյուղատնտեսական արտադրության ստեղծումը (խոշոր խորհրդային տնտեսությունների կազմակերպումը, կոլեկտիվացման զարգացումը)՝ միաժամանակ նպաստելով չքավորական և միջակային տնտեսության վերելքին։ Խորհրդային իշխանության հարկային քաղաքականությունը վորպես կուլակի վրա գրոհելու միջոց։ Ի՞նչ դեր է կատարում հարկային քաղաքականությունը վորպես չքավորական և միջակային տնտեսության վերելքի ստիմուլ։ Առաջիկա հնգամյակում բերքատվությունը 35°/₀-ով բարձրացնելու և ցանքատարածությունը 22°/₀-ով ավելացնելու խնդիրները։ Գյուղատնտեսության ինտենսիֆիկացիան վորպես աշխատանքայնության ավելացման և գործազրկության կրճատման միջոց։

Սոցիալիստական արդյունաբերության ղեկավարությամբ գործող գյուղատնտեսական կոոպերացիան գյուղատնտեսական կոլեկտիվ արտադրության կազմակերպիչն է հանդիսանում։

3. ԽՍՀՄ ինդուստրիացումը վորպես գյուղատնտեսության վերելքի և սոցիալիստական վերակազմության հիմնական միջոց։ Զոդման նոր ձևերը բանվոր դասակարգի և գյուղացիության արտադրական կապի

հիմունքով։ Մեքենա-տրակտորային կայանների ցանցի զարգացումը, մասսայական կոոպերատացիայի զարգացումը, արտադրական կոոպերացման և կոլեկտիվացման զարգացումը, նոր խորհրդային տնտեսությունների շինարարությունը և հների աշխատանքի բարելավումը։ Բանվորական բրիգադների դերը գյուղում։ Շեֆային ընկերությունները գյուղի և քաղաքի կապն ամրապնդելու գործին աջակցելու խնդրում։

Գործնական հարց—ձեռնարկի դիրեկտորի զեկուցումը «Ի՞նչպես է գնում մեր ձեռնարկության հում նյութ մատակարարելու գործը» թեմայի շուրջ[1])։

### Զեկուցման օրինակելի սխեման

1. Ի՞նչպիսի հում նյութ և մշակում տվյալ ձեռնարկությունը և վորտեղից է ստանում այն (արտասահմանից, մեր յերկրի գյուղատնտեսական կամ արդյունաբերական ռայոններից)։

2. Մշակում է արդյոք տվյալ ձեռնարկությունը գյուղատնտեսական հում նյութեր (կապել այն հարցի հետ, թե ի՞նչ դեր է կատարում գյուղատնտեսությունը տվյալ ձեռնարկության համար և ինչպես է կապված նրան)։

3. Վո՞ր մթերող կազմակերպությունների միջոցով է ստանում ձեռնարկությունն իր հում նյութերը (գյուղատնտեսական կոոպերացիայի, Առևտրի ժողկոմատի և այլն)։

---

[1]) Այն ձեռնարկությունների համար, վորոնք հում նյութ են մշակում։ Մյուս ձեռնարկությունների համար պետք է դնել ստորև բերված գործնական զեկուցումներից մեկնումեկը։

4. Կանոնավո՞ր կերպով է ստացվում արդյոք հում նյութը. յեթե վոչ, ապա դա ինչպես է անդրադառնում արտադրության վրա։

5. Հում նյութի վորակը և գինը։

6. Ի՞նչպես կարող է պատգամավորուհին ոժանդակել հում նյութի ավելի խնայողաբար գործածելու խնդրին, իսկ գյուղի հետ կապվելու դեպքում՝ տեխնիկական մշակույթների զարգացման գործին։

Յերրորդ ժողովում, բացի վերոհիշյալից, կարելի յե դնել շեֆային ընկերության կամ բանվորական բրիգադի զեկուցումը գյուղացիության ցույց տրված ոժանդակության կամ ավելյալ վայրի գյուղատնտեսության համար մեքենաներ մատակարարելու և հնգամյա պլանի այդ մատակարարման վերաբերյալ հեռանկարների մասին։ Հնարավոր է նույնպես գործնական հարցի փոխարեն պատգամավորուհիների հետ միասին ուսումնասիրել գյուղատնտեսական հարկի որենքը։

## ՉՈՐՐՈՐԴ ԺՈՂՈՎ

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ—«ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ»

1. Սպառողական կոոպերացիան և պետական առևտուրն ապրանքաշրջանառության սոցիալիստական հատվածն են կազմում։ Սպառողական կոոպերացիայի կազմակերպչական դերն աշխատավորության շահերին սպասարկելու գործում։ Պետական ու կոոպերատիվ ապրանքաշրջանառության աճումը և մասնավոր կապիտալի հետագա վտարումը ըստ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի։ Կոոպերացիայի միջոցով կատարվող գների իջեցումը վորպես

ռեալ աշխատավարձի բարձրացման միջոց։ Առևտրական ապարատի ռացիոնալացումը։

2. Կոոպերացիան վորպես աշխատավորական լայն մասսաների հասարակական կազմակերպություն, այդ մասսաների վերահսկողությամբ և ղեկավարությամբ։ Փայատերերի ընդհանուր ժողովները, խանութային հանձնաժողովները և կոոպերացիայի աշխատանքի հասարակական վերահսկողության մյուս տեսակները։ Աշխատավորներին կոոպերացիայի մեջ ներգրավելու խընդիրներն ու հեռանկարները։

Կոոպերացիայի սեփական միջոցների շատացման խնդիրները (փայակուտակում, նպատակային մուծումներ և այլն)։ Դիֆֆերենցիալ փայի կիրառումը սպառողական կոոպերացիայի մեջ։

3. Սպառողական կոոպերացիայի՝ աշխատավորության կուլտուրական մակարդակի բարձրացման և կենցաղային սպասարկման ուղղությամբ կատարելիք աշխատանքի հեռանկարները ըստ հնգամյա պլանի։ Կուլտուր-կենցաղային կոոպերացիան (կոոպերացման հիման վրա ճաշարանների, մանկապարտեզների, մանկական հրապարակների, մսուրների և այլ հիմնարկների կազմակերպումը)։

4. Բնակարանային կոոպերացիայի աճումն առաջիկա հնգամյակում և իր անդամների կենցաղային սպասարկումը (շինարարության գումարների 5%-ային հատկացումները կենցաղային հիմնարկների համար)։

Գործնական հարց—գեղական կոոպերատիվի զեկուցումն իր աշխատանքների մասին։

**Զեկուցման օրինակելի սխեման**

1. Ի՞նչ չափով է սպասարկում կոոպերատիվը բանվորական ընտանիքի պահանջներին (բանվորական բյուջեյի համակումը, մթերքների վորակը, պակասող ապրանքների բաշխումը և այլն)։

2. Ի՞նչպիսի միջոցների հիման վրա յե աշխատում կոոպերացիան։ Փայակուտակման հարցերը։

3. Խնայողական ռեժիմը և գների իջեցումը տվյալ կոոպերատիվում։

4. Տվյալ կոոպերատիվի վաստակը և այդ վաստակի բաշխումը։ Կոոպերատիվի անդամների մասնակցությունը վաստակների բաշխման գործում։

5. Ի՞նչպես պետք է աջակցեն պատգամավորուհիները կոոպերատիվի աշխատանքի բարելավման գործին։

Յելնելով տեղական պայմաններից՝ կարելի յե դընել նաև հետևյալ գործնական զեկուցումները—խանութային հանձնաժողովի զեկուցում, զեկուցում տեղական կոոպերատիվի՝ աշխատավոր կանանց կենցաղի բարելավման ուղղությամբ կատարած աշխատանքների մասին, բնակարանային կոոպերատիվի զեկուցումը բնակարանային շինարարության և այդ շինարարության գումարներից կենցաղային հիմնարկների համար արված 5-տոկոսային հատկացումների մասին, հասարակական սննդի բաժնի զեկուցումը։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ—«ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ Ե»

1. Ի՞նչպես ե ֆաբգործտեղկոմը բանվոր-բանվորուհիներին ներգրավում ձեռնարկության կառավարման և ղեկավարման գործում (արտադրական խորհրդակցություններ և համաժողովներ, վերահսկիչ համաժողովներ և այլն)։ Սոցիալիստական վերակառուցման շրջանի պրոֆմիութենական աշխատանքի հիմնական խնդիրը, այն ե՝ տնտեսական հնգամյա պլանի հաջող կատարման աջակցությունը պահանջում ե, որ պրոֆմիությունները պրոլետարիատի բոլոր ուժերն ինչքան կարելի յե մեծ չափերով ներգրավեն տնտեսական շինարարության մեջ։

2. Ֆաբգործտեղկոմների աշխատանքը բանվորների նյութական շահերի պաշտպանության և նրանց կենցաղային, պայմանների բարելավման խնդրում։ Պրոֆմիութենական աշխատանքի այս կողմի վրա ուշադրություն ուժեղացնելու անհրաժեշտությունը։

3. Ի՞նչպես ե ֆաբգործտեղկոմն սպասարկում բանվոր-բանվորուհիների կուլտուր-կենցաղային կարիքներին։ Պրոֆմիությունների կուլտուր-կենցաղային աշխատանքը բանվոր-բանվորուհիների կուլտուրական մակարդակը բարձրացնելու և ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման կապակցությամբ դասակարգայնորեն դաստիարակելու միջոց ե հանդիսանում։ Պրոֆմիությունների խնդիրները բանվոր-բանվորուհիների արտադրական վերակավորման

*տապալիչում, ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի պահանջների կատարելությամբ:*

*4. Պրոֆմիությունների դերը խորհրդային և տըն-տեսական ապարատի բյուրոկրատիզմի դեմ պայքա-րելիս: Պրոֆմիությունների միջոցով շարքային բան-վոր-բանվորուհիների առաջքաշումը ղեկավար վար-չական և տնտեսական աշխատանքների մեջ վորպես բյուրոկրատիզմի դեմ պայքարելու միջոց: Պրոլետա-րական մասնագետների նոր կադրերի պատրաստման խնդիրը: Բանվորուհիներին բարձրագույն ուսումնա-կան հիմնարկներ, տեխնիկումներ, բանֆակներ և պա-նազան կուրսեր ուղարկելու խնդիրը:*

*5. Պրոֆմիությունը պրոլետարիատի ավանգարդ կոմկուսակցության և մասսաների միջև ձգված շար-ժիչ փոկն է: Պրոֆմիությունների ամրապնդման խըն-դիրները, ինքնաքննադատություն և դեմոկրատիայի իրականացումը:*

Գործնական հարց — Ֆաբգործտեղկոմի զեկուցումը «Կոլպայմանագրի վերակնքման արդյունքները» թեմայի շուրջը:

**Զեկուցման որինակելի սխեման**

*1. Ի՞նչ է կոլպայմանագիրը:*

*2. Ե՞րբ է տեղի ունեցել կոլպայմանագրի վեր-ջին վերակնքումը տվյալ ձեռնարկության մեջ:*

*3. Բանվորուհիների մասնակցությունը տվյալ ձեռնարկության կոլպայմանագրի վերակնքման մեջ: Ինչո՞ւ յե անհրաժեշտ այդ մասնակցությունը (բան-վորուհիների շահագրգռվածությունն արտադրության*

կարգացմամբ, աշխատավարձի կանոնավորմամբ, կենցաղային պայմանների բարվոքմամբ և կուլտուրական մակարդակի բարձրացմամբ)։

4. Ինչպիսի արդյունքներ կարելի յե նշել նոր տարիֆային ցանցի հիման վրա կնքված կոլպայմանագրերից։

Կարելի յե դնել նաև հետևյալ զեկուցումները — աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի զեկուցում, զեկուցում հերթափոխությամբ աշխատող ձեռնարկություններում կատարված կուլտուրական աշխատանքների մասին՝ 7-ժամյա բանվորական օրվա անցնելու կապակցությամբ. միաժամանակ նաև բանվորների կենցաղի բարելավման ֆոնդի օգտագործումը տվյալ ձեռնարկում։

## ՎԵՑԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ—«Ի՞ՆՉՊԵՍ Ե ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՎԱՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ»

1. Տեղական խորհրդի աշխատանքը։ Ի՞նչպես ե տեղական խորհուրդն իր աշխատանքում իրագործում դասակարգային գիծը։

2. Խորհուրդները վորպես պրոլետարիատի դիկտատուրայի ձևի։ Ի՞նչպես են իրագործում խորհուրդները բանվոր դասակարգի և գյուղական չքավորության դաշինքը գյուղացիության միջակային մասսայի հետ բանվոր դասակարգի ղեկավարությամբ։

3. Խորհուրդները կառավարման շկոլա յեն հան-

դյուրանում աշխատավորների լայն մասսաների համար։ Խորհուրդների գործունեության աշխուժացման խնդիրը։ Բանվոր դասակարգը բյուրոկրատիզմի դեմ վարած պայքարում և խորհրդային ապարատի զտման, էժանացման և բարելավման գործում։ Բանվոր-բանվորուհիների առաջքաշումը խորհրդային ղեկավար աշխատանքների մեջ որպես բյուրոկրատիզմի դեմ պայքարելու միջոց։

Մասսաների՝ խորհուրդների աշխատանքին մասնակցելու ձևերը (խորհուրդների սեկցիաները, պատգամավորների հաշվետվությունները, ընտրություններին մասնակցելը, հրահանգների քննարկումը և այլն)։

Պատգամավորներին ետ կանչելու իրավունքը։

4. Խորհրդային պետությունն ազգությունների կամավոր դաշինք է։ Մանր ազգությունների վիճակը ցարիզմի ժամանակ։ Ազգային հանրապետությունների ու հետամնաց մարզերի ու ռայոնների տնտեսական և կուլտուրական վերելքը խորհրդային իշխանության ժամանակ։ ԽՍՀՄ ժողովուրդների լիակատար իրավահավասարության իրականացումը կուսակցության և խորհրդային իշխանության ազգային քաղաքականության ամենագլխավոր սկզբունքն է։

5. Խորհրդային Միությունը բուրժուական շրջապատման պայմաններում։ Կարմիր բանակը և ԽՍՀՄ պաշտպանությունը։ Բանվորուհիների անելիքները պաշտպանության նախապատրաստման գործում։ ՊԱՁԸ-Ավիաքիմ և Կարմիր խաչի ընկերությունը։

Գործնական հարց — զեկուցում խորհրդի անդամների ավագի (կամ մի՛ խումբ անդամների) աշխատանքի մասին։

### Զեկուցման օրինակելի սխեման

*1. Խորհուրդների անդամներից ավագ նշանակելու նպատակը և պատգամավորների աշխատանքի մյուս ձևերը։*

*2. Ինչումն է կայանում ավագի (կամ խմբի) աշխատանքը տվյալ ձեռնարկության մեջ հերթապահելու ընթացքում։*

*3. Ի՞նչպիսի դիմումներով ու կարիքներով են գընում բանվոր-բանվորուհիներն ավագի կամ խորհրդի անդամին մոտ, և ինչ են անում վերջիններս այդ հարցերի առթիվ։*

*4. Ի՞նչպես է աջակցում ավագը տվյալ ձեռնարկության բանվոր-բանվորուհիների տված հրահանգները կյանքում կիրառելու գործին։*

*5. Ի՞նչպես է դնում ավագը բանվոր-բանվորուհիների կուլտուր-կենցաղային կարիքների վերաբերյալ հարցերը նախագահության նիստերին, սեկցիայում, խորհրդի պլենումում։*

*6. Ի՞նչպես է ավագը կազմակերպում հաշվետվությունը տվյալ ձեռնարկության ընտրողների առաջ։*

*7. Ի՞նչպես է ավագն աջակցում խորհրդի սեկցիայում աշխատող պատգամավորուհիների գործնական աշխատանքին։*

*8. Ի՞նչպիսի խնդիրներ են դրվում պատգամավորական ժողովի առաջ ավագի դերքն ամրապնդելու և բանվոր-բանվորուհիների մասսայում նրան ժողովրդականացնելու գործում։*

Այս զեկուցման փոխարեն, նայած տեղական պայմաններին, կարելի յե դնել պատգամավորուհինե- րի մի խմբի զեկուցումը տեղական խորհրդի կողմից բանվորուհիների կարիքների սպասարկման ուղղու- թյամբ կատարած աշխատանքի մասին։

### Զեկուցման որինակելի սխեման

1. Խորհրդի վրա սեկցիաներին են կցված պատ- գամավորուհիները և ինչպիսի աշխատանք են կատա- րում այնտեղ։

2. Մայրության և մանկության պաշտպանու- թյան ու նախադպրոցական ինչպիսի հիմնարկներ գո- յություն ունեն տվյալ գործարանին կից, ռայոնում, քաղաքում։

3. Ի՞նչ չափով են նրանք սպասարկում բանվո- րուհիների կարիքները (ինչպես է դրված այնտեղ աշխատանքը. մանուկների և մայրերի քանակը)։

4. Տվյալ գործարանի բուժարանը։ Ի՞նչ չափով է նա սպասարկում բանվորներին։

5. Ի՞նչպես են պատգամավորուհիներն ոժանդա- կում տեղական խորհրդի՝ բանվորուհիների կարիքներն սպասարկելու ուղղությամբ կատարած աշխատանքին։

Կարող է դրվել նաև ռայոնական խորհրդի զեկու- ցումը խորհրդային ապպարատի գոման արդյունքների մասին կամ խորհրդի սեկցիաներից մեկի զեկուցումը։

## ՅՈԹԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ—«ՀԱՆՈՒՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ, ՀԱՆՈՒՆ ՆՈՐ ԿԵՆՑԱՂԻ»

1. Աշխատավորների կուլտուրական մակարդակի և սոցիալիստական շինարարության խնդիրների ան-

համապատասխանությունը։ Ընդհանուր ուսումը կիրառելու խնդիրները։ Կանանց անգրագիտության և կիսագրագիտության վիթխարի տոկոսը, բանվորուհիների աշխատանքի ցած վորակավորումը։

2. Աղջիկները և կանայք ժողովրդական կրթության բոլոր տեսակներում։ Կուլտուրական շինարարության հնգամյա պլանի համաձայն կանանց ուսման բոլոր տեսակներում ներգրավելու խնդիրները։ Դպրոցական շինարարության շուրջ խորհրդային հասարակայնության և ինքնագործունեության ստեղծելու խնդիրը (բանվորուհիների ներգրավումը դպրոցական խորհուրդներում, դպրոցական տաք նախաճաշ կազմակերպելու խնդիրը և այլն)։

3. Պայքար բուրժուական ազդեցության դեմ լայն մասսաների վրա։ Կրոնը բուրժուազիայի զենքն է պրոլետարիատի և սոցիալիստական շինարարության դեմ վարած պայքարում։ Յեկեղեցականների ակտիվության աճումը վերջին ժամանակներում։ Աղանդավորությունը վորպես բուրժուազիայի՝ մասսաների, հատկապես կանանց վրա ունեցած կրոնական ազդեցության ամենաճկուն ձևը։ Աղանդավորության և յեկեղեցականների դեմ մեր վարած պայքարը։

4. Ալկոհոլիզմն ու պոռնկությունը հին կարգերի ժառանգություն են։ Առաջիկա հնգամյակում ալկոհոլիզմի դեմ մղելիք պայքարը։ Կինոն, ռադիոն, ակումբը և կուլտուրական թեյարանը ողու դեմ։ Պոռնկության դեմ պայքարելու միջոցները։

5. Անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր բանվորուհի ծանոթ լինի տվյալ ձեռնարկության կուլտուր-կենցաղային շինարարության հնգամյա պլանի հարցերին։

6. Ի՞նչ անելիքներ ունի պատգամավորական ժողովը, վորպես կենցաղի առողջացման ազդակ և կուլտուրայի առաջնորդ։ Ընտանիքի ներսում կանանց փաստական իրավահավասարություն ձեռք բերելու ուղղությամբ մղելիք պայքարը։ Պատգամավորական ժողովի հատուկ անելիքները ազգային նախապաշարմունքների՝ շովինիզմի դեմ պայքարելիս։

Գործնական հարց.—Լուսբաժնի (ռայոնական կամ շրջանային) զեկուցումը։

### Զեկուցման որինակելի ծրագիր

1. Տվյալ քաղաքի ի՞նչ տիպի դպրոցներն են սպասարկում աշխատավորների յերեխաներին և ինչ չափով են ընդգրկված այս ուսումնական հիմնարկներում բանվորների յերեխաները, մասնավորապես աղջիկները (համեմատել նախահեղափոխական դրության հետ)։

2. Ի՞նչ են անում լուսբաժնի մարմինները բանվորուհիների, մասնավորապես չափահաս բանվորուհիների անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու խնդրում։

3. Ի՞նչ է անում տեղական լուսբաժինը բանվորուհու և բանվորի աղջկա համար բարձրագույն ուսումնական հիմնարկները մտնելու հնարավորություն ստեղծելու ուղղությամբ։

4. Ի՞նչպիսի ռեալ նվաճումներ ունենք մենք մեր քաղաքի ժողովրդական կրթության գործում վերջին տարիների ընթացքում, և վորոնք են մեր հեռանկարները աճող սերնդի ընդհանուր ուսուցման նկատմամբ։

5. Դպրոցական տարիքի յերեխաներ ունեցող պատգամավորուհիները, ինչպես նաև բանվորուհիներն ինչպիսի աջակցություն կարող են ցույց տալ լուսբաժնին թե բանվորուհիներին լիկկայանները, մեծահասակների դպրոցներն ու կուրսերը ներգրավելու գործում և թե I ու II աստիճանի դպրոցներում կատարելիք աշխատանքում։

Կարելի յե նույնպես տալ հետեվյալ զեկուցումները—Ֆաբգործտեղկոմի զեկուցումը տվյալ ձեռնարկության բանվորների կուլտուր-կենցաղային կարիքներն սպասարկող հիմնարկների հնգամյա շինարարության հեռանկարների մասին (մանկական սենյակներ, մանկապարտեզներ, հրապարակներ, մսուրներ և այլն), պատգամավորուհիների խմբի զեկուցումը այն մասին, թե քաղաքում ինչպես է դրված պայքարն ալկոհոլիզմի, պոռնկության և սոցիալական հիվանդությունների դեմ. «Անաստված» միության զեկուցումը. մայրության և մանկության պաշտպանության հանձնաժողովի զեկուցումը բանվորուհիների կարիքների սպասարկման մասին. զեկուցում նախադպրոցական դաստիարակության մասին։

## ՈՒԹԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ—«ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՎԱՆԳԱՐԴՆ Է»

1. ՀամԿ(բ)Կ բանվոր դասակարգի կուսակցությունն է, նրա ավանգարդը և սոցիալիզմի համար վարած պայքարի ղեկավարը։ ՀամԿ(բ)Պ ղեկավարում է ԽՍՀՄ վողջ տնտեսական շինարարությունը։

Նշված խնդիրների իրագործման ընթացքում կուսակցությունը հենվում է ամբողջ բանվոր դասակարգի և գյուղացիության այն մասի վրա, վորն ավելի մոտիկ է կանգնած պրոլետարիատին։ Իր ֆրակցիաների միջոցով կուսակցությունը ղեկավարում է անկուսակցական մասսայական կազմակերպությունները։

2. Սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարի կուսակցական ղեկավարությունն ապահովվում է կուսակցության շարքերի ամրությամբ և միաձուլությամբ։ Պայքար հանուն կուսակցության միասնականության (աջ և ձախ թեքումների դեմ)։

Կուսակցության կազմակերպչական կառուցվածքը։ Ցենտրալիզմ և դեմոկրատիզմ։ Դիսցիպլինա։

3. Կուսակցության սոցիալական կազմը վորպես նրա առողջությունն ապահովող պայման։ Կուսակցության վորոշումները կուսակցության պրոլետարական միջուկի ընդլայնման մասին։ Բանվորուհիներին կուսակցության մեջ գրավելու խնդրի հատուկ նշանակությունը։ Կուսակցության զտման խնդիրը և այդ զտման արդյունքները։

Կոմյերիտմիությունն ու պիոներական շարժումը վորպես յերիտասարդությունը կուսակցության համար նախապատրաստելու ուղիներ։

4. Կոմմունիստական կուսակցությունների միջազգային միությունը — Կոմինտերնը — բոլոր յերկրների պրոլետարիատի հեղափոխական դասակարգային կռվի ղեկավարն է։

5. Պատգամավորական ժողովի դերն ու խնդիրները արտադրական բանվորուհիներին կուսակցության մեջ ընդունելու ուղղությամբ ձեռնարկված նա-

*խաղաղարարական աշխատանքի տեմպի ուժեղացման խնդրում։*

Գործնական հարց—պատգամավորուհիների խմբի զեկուցումը այն մասին, թե ի՛նչպես է պատգամավորական ժողովը աջակցում բանվորուհիներին կուսակցության մեջ մտնելու խնդրում։

**Զեկուցման օրինակելի ծրագիրը**

*1. Ի՞նչ գիտեյինք մենք կուսակցության աշխատանքի ու խնդիրների մասին նախքան պատգամավորական ժողովում ընտրվելը։*

*2. Ի՞նչ իմացանք կուսակցության և նրա խնդիրների մասին պատգամավորուհի դառնալուց հետո*

*3. Ինչու չենք մտնում կուսակցության մեջ։*

*4. Ի՞նչ աջակցություն է ցույց տվել մեզ պատգամավորական ժողովը կուսակցության մեջ մտնելու համար նախապատրաստվելիս։*

*Այս զեկուցման փոխարեն կարելի յե դնել բջջի քարտուղարի զեկուցումը՝ բանվորուհիներին կուսակցության մեջ ներգրավելու ուղղությամբ կատարած աշխատանքի խնդիրների մասին։*

*8-րդ ժողովի (զրույցներ կուսակցության մասին) վերջում կարելի յե կազմակերպել կուսակցության պատմության զանազան մոմենտներն ուսումնասիրող խմբակներ, ըստ պատգամավորուհիների ցանկության ու հայտնաբերած հետաքրքրության։ Կարելի յե նույնպես դնել մի զեկուցում պիոներական ջոկատի աշխատանքների մասին։*

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ—«ԼԵՆԻՆԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՄԱՍԻՆ»

1. Բանվորների և գյուղացիների պայքարը ցարիզմի դեմ Ռուսաստանում։ Ինքնակալության դեմ միահամուռ ուժերով պայքարելու համար բանվորներին ու գյուղացիներին իրար միացնող ընդհանուր շահերը։ Ինչու բանվոր դասակարգը հեղափոխության գլուխն անցավ։ Լենինի և բոլշևիկյան կուսակցության տակտիկան պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի խնդրում 1905 թվի հեղափոխության ժամանակ (բանվոր դասակարգի դաշինքն ամբողջ գյուղացիության հետ կալվածատերերի և ցարիզմի դեմ, կադետական բուրժուազիայի չեզոքացումով)։ Ի՞նչպես են զարգացել 1905 թվի իրադարձությունները։ Բոլշևիկների տակտիկայի ճշտության ստուգումը 1905 թվի հեղափոխության փորձում։

2. Ի՞նչպիսի լոզունգներով էին կռվում բանվորներն ու գյուղացիները (բանակը) Փետրվարյան հեղափոխության ժամանակ։ Գյուղացիության ո՞ր խավերն էին հանդիսանում պրոլետարիատի հիմնական դաշնակիցը Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ (ամենաչքավոր գյուղացիության և ազգաբնակության կիսապրոլետարական խավերի հետ միասին բուրժուազիայի և գյուղի միջակ գյուղացիության չեզոքացմամբ, հանուն սոցիալիստական հեղաշրջման)։

3. Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը սոցիալիստական շինարարության շրջանում։ Չքավորությունը բանվոր դասակարգի հենարանն է

*գյուղում, իսկ միջակ գյուղացիությունը նրա դաշնակիցն է։ Բանվոր դասակարգի և չքավորության սերտ դաշինքը միջակային մասսաների հետ սոցիալիստական շինարարության և կուլակի վրա գրոհելու խնդիրների իրականացման համար։ Զոդման նոր ձևերը տնտեսության վերակառուցման շրջանում։ Կուսակցության XV համագումարի և XVI կոնֆերանսի վորոշումները։ Ինչպիսի ուղիներով բանվոր-բանվորուհիները կարող են ոժանդակել գյուղացիության հետ կապված դաշինքի ամրացման գործին։*

Գործնական հարց—բանվորուհիների հիշողությունները այն մասին, թե նրանք ի՛նչպիսի մասնակցություն են բերել հեղափոխական շարժմանը (կարելի յե նկատի ունենալ համապատասխան գեղարվեստական գրվածքներ)։

*Կարելի յե լսել նույնպես բջջի քարտուղարի զեկուցումն արձակուրդային կամպանիայի և գյուղն արձակուրդ գնացող բանվորուհիների անելիքների մասին։*

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԶՐՈՒՅՑՆԵՐ

*Բանվորների կանանց կազմակերպումը կենցաղի խնդիրների շուրջ և կենցաղային մնացորդների դեմ մղելիք պայքարում։*

### ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՅՑ

*Բանվորական ընտանիքին ցույց տրվելիք բժշկական և սանիտարական ոգնությունը (առողջապահական բաժնի զեկուցումը և Կարմիր Խաչի ընկերության կից զեկուցումը)։*

## Զեկուցման ուրվանկարի սխեման

1. Ի՞նչպես է իրագործվում բանվորին և նրա ընտանիքին ցույց տրվելիք բժշկական օգնությունը. ա) բուժարանները, հիվանդանոցները, ծննդկանների տները. Ի՞նչպիսի թերություններ կան նրանց աշխատանքի մեջ. լրիվին ապահովված է արդյոք այդ հիմնարկների բուժական օգնությամբ ապահովագրվածի ընտանիքի անդամը. բ) տնային բժշկական օգնությունը։

2. Պայքար սոցիալական հիվանդությունների դեմ։

3. Աշխատավոր մոր և մանկան ցույց տրվելիք բժշկական և սանիտարական օգնությունը — ա) մանուկների մահացությունը հեղափոխությունից առաջ և հիմա. կոնսուլտացիաները. գիտակից մոր դերը մանուկների մահացության դեմ մղվող պայքարում. բ) մսուրները. մանկության և մայրության ցույց տրվող օգնության նվաճումները մեր հիմնարկություններում։

4. Բանվորական մասսայի սանիտարա-բնակարանային լուսավորության ուղղությամբ ձեռք առնըված միջոցները — ա) աշխատավորներով բնակեցված տներին, ձեռնարկություններին և հիմնարկություններին կից սանիտարական հանձնաժողովներ կազմակերպելը. կնոջ դերն այդ հանձնաժողովներում. բ) սանիտարական և առողջապահական հարցերի մասին դասախոսություններ կազմակերպելը և այդպիսիք ուսումնասիրող խմբակներ ստեղծելը. առաջին օգնության խմբակները. կնոջ մասնակցությունն այդ խմբակներում։

### Օրինակելի գործնական առաջադրություն պատգամավորուհիների համար

*Դուրս բերել մի խումբ պատգամավորուհիների՝ հետազոտելու համար բուժարանները, հիվանդանոցները և առողջապահական բաժնի մյուս հիմնարկները, նրանց թերությունները հայտաբերելու և վերացնելու նպատակով։*

## ԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

*Լուսբաժնի զեկուցումը յերեխաների սոցիալական դաստիարակության ուղղությամբ կատարած աշխատանքների մասին։*

### Զեկուցման օրինակելի սխեման

*1. Նախադպրոցական դաստիարակության հիմնարկների ցանցն ու կացությունը։*

*2. I և II աստիճանի դպրոցների կատարած աշխատանքը բանվորների յերեխաների, հատկապես աղջիկների ուղղությամբ։*

*3. Ընդհանուր ուսուցման պլանը։*

*4. Ի՞նչ տոկոսով են բանվորների յերեխաներն ավարտում յոթնամյա և ինննամյա դպրոցները, և ի՞նչ է անում լուսբաժինը ինննամյա դպրոցն ավարտելու հնարավորություններ ստեղծելու խնդրում։*

*5. Յերեխաների արտադպրոցական դաստիարակությունը։*

*6. Մանկության պաշտպանությունը և պայքար անապաստանության դեմ։*

7. Ինչո՞վ կարող են բանվորների կանայք օժանդակել դպրոցին:

Կարելի յե դնել քաղլուսավարի զեկուցումը չափահաս ազգաբնակության մեջ կատարած աշխատանքի մասին:

1. Չափահասների և անչափահասների անգրագիտության վերացումը:

2. Բանվորական կրթությունը (կուրսեր, խմբակներ, իրիկնային հանրակրթական դպրոցներ, իրիկնային համալսարաններ). Ինչ չափով են ներգրավված ուսուցման այս սիստեմում բանվորների կանայք և բանվորուհիները:

**Օրինակելի գործնական առաջադրություններ պատգամավորուհիների համար**

Այս զեկուցումից հետո կարելի յե դուրս բերել մի խումբ պատգամավորուհիների՝ նախադպրոցական աշխատանքների հետ ծանոթանալու համար: Նրանց կարելի յե հանձնարարել նաև նախադպրոցական հրապարակի հետազոտությունը: Յեվ կամ թե դուրս բերել մի խումբ պատգամավորուհիների, վորպեսզի հետազոտեն լիկկայանի կամ իրիկնային բանֆակի աշխատանքները, նպատակ ունենալով պարզել, թե ինչպես է դրված աշխատանքն այնտեղ, և ինչ չափով են ընդգրկված չափահաս կանայք:

## ԵՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

*(Եզրափակիչ)*

*Բանվորների կանանց կազմակերպումը կենցաղի վերակազմության խնդիրների շուրջ և կենցաղային մնացորդների դեմ մղելիք պայքարում*

*1. Հինը ներկա կենցաղում (սանիտարա-առողջապահական ունակությունների անբավարարությունը, սոցիալական հիվանդությունները, ալկոհոլիզմ, կրոնական նախապաշարումները, սնոտիապաշտությունը և խուլիգանությունը)։ Բանվորների կանանց անելիքները նոր կենցաղի վերակազմության խնդրում։ Աշխատավորների, հատկապես կանանց գրագիտության բարձրացումը վորպես կուլտուրական հեղափոխության հիմնական խնդիրներից մեկը։*

*2. Աշխատավորների կուլտուրական և կենցաղային հետամնացությունը վորպես արգելակ սոցիալիստական շինարարությանն ակտիվ մասնակցություն բերելու գործում։ Բանվորական ընտանիքի կուլտուրական մակարդակի բարձրացումը և կենցաղի վերակազմությունը սոցիալիստական շինարարության անկապտելի մասն են կազմում։ Աճող սերնդի կոմմունիստական դաստիարակությունը։*

*3. Կրոնական նախապաշարումներն ընտանիքի մեջ բուրժուազիայի՝ մասսաների վրա ունեցած ազդեցության մնացորդն են կազմում։ Կրոնը բուրժուազիայի փորձված զենքն է՝ պրոլետարիատի և հասարակության սոցիալիստական վերակազմության դեմ նրա մղած պայքարում։ Աղանդավորությունը պրոլետա-*

բիսայի վրա գործող բուրժուական ազդեցության ամենաճկուն ձևն է Ազգային թշնամության հրահրման ձևերը բուրժուազիայի ամենանախընտրելի զենքն են աշխատավոր մասսաներին պառակտելու գործում։ Բանվորների կանանց անելիքներն ընտանիքի ներսում և յերեխաների մոտ իրենց գոյությունը պահած հնի մնացորդների դեմ պայքարելու և վերացնելու գործում։

---

## ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

### ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՅՑ

Բանվորուհիների բաժնի զեկուցումն այն մասին, թե ինչու յե կուսակցությունը հատուկ աշխատանք կատարում աշխատավոր կանանց մեջ, և կին-կազմակերպչի կից զեկուցումը տվյալ ռայոնի կամ բանվորական ավանի բանվորների կանանց մեջ կատարած աշխատանքի մասին։

**Զեկուցման օրինակելի սխեման**

1. Ինչպիսի հատուկ աշխատանք է կատարում կուսակցական կոմիտեն բանվորուհիների մեջ (պատգամավորական ժողովներ, խմբակներ, աշխատանքը ակտիվի հետ)։

2. Ինչպես է բանվորուհիների բաժինը կազմակերպում բանվորների կանանց։

3. Ռայոնում բանվորների ինչքան կանայք են ներգրավված պատգամավորական ժողովներում և խորհրդային, կոոպերատիվ ու այլ կազմակերպությունների հասարակական աշխատանքներում։

4. Ի՞նչ նոր բան է տալիս բանվորի կնոջ նրա մասնակցությունը պատգամավորական ժողովում։

5. Մեր ռայոնում ի՞նչ չափով է բանվորի կինը պատգամավորական ժողովի միջոցով տարվել հասարակական աշխատանքի (կոոպերացիայում, խորհուրդների սեկցիաներում և այլն)։

Պատգամավորուհիների հերթական նիստում կարելի է դնել տեղական կուսկոմի զեկուցումը կուսակցության աճման կանոնավորման և կուսզտման արդյունքների մասին։

**Օրինակելի գործնական առաջադրություններ պատգամավորուհու համար**

Կազմակերպել էքսկուրսիա դեպի Հեղափոխական թանգարանը (եթե այդպիսին կա մերձակայքում)։

---

# ԽՍՀՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՊԱՏՄԱՆ ՄԵՋ

## ԱՌԱՋԻ՛Ն ԶՐՈՒՅՑ

## ՏԵՂԱԿԱՆ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

**Զեկուցման որինակելի սխեման**

1. Բանվորների կանանցից շատերն են արդյոք Պաջը-Ավիաքիմի անդամ և աշխատում նրա խմբակներում։

2. Ի՞նչ է Պաջը-Ավիաքիմը, երկրի պաշտպանության խնդիրներից բացի՝ էլ ինչպիսի խնդիրներ առաջադրում նա խաղաղության ժամանակ, և ին-

չու յուրաքանչյուր բանվորի կին պետք է աջակցի նրան։

3. Ի՞նչպես կարող են բանվորների կանանցից ընտրված պատգամավորուհիներն օժանդակել Գաջը-Ակֆաքիժի անդամների թվի ավելացման և աջակցել նրա աշխատանքին։

Այս նույն ժողովում կարելի յե դնել նաև ՄՈՊՐ-ի զեկուցումը։

## ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

## ՄՈՊՐ-Ի ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

### Զեկուցման օրինակելի սխեման

1. Բանվորներից և բանվորուհիներից շատե՞րն են արդյոք տեղյակ ձեռնարկության ՄՈՊՐ-ի բջջի անդամ։
2. Ի՞նչ է ՄՈՊՐ-ը, ինչու պետք է բանվորների կանայք աջակցեն նրան։
3. Ինչու չի անհրաժեշտ օգնել կապիտալիստների դեմ պայքարող կապիտալիստական, գաղութային և կիսագաղութային յերկրների բանվորներին։
4. Ի՞նչպես կարող են պատգամավորուհիներն օժանդակել ՄՈՊՐ-ի անդամների թվի ավելացմանը և աջակցել նրա աշխատանքին։

### Որինակելի գործնական առաջադրություններ պատգամավորուհիների համար

Դուրս բերել մի խումբ պատգամավորուհիների տեղական Գոջը-Ակֆաքիժի աշխատանքի հետ ծանոթանալու և բանվորների կանանց մասնակցության չափը պարզելու նպատակով։

Դուրս բերել մի յերկրորդ խումբ պատգամավո-րուհիների՝ ՄՈՊՐ-ի բջիջում նույն նպատակով հետա-զոտություն կատարելու։

## ՅԵՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

(Յեզրափակիչ)

### ԽՍՀՄ-Ն կապիտալիստական օղակման մեջ

1. Դասակարգային պայքարը կապիտալիստա-կան յերկրներում։ Կապիտալիստական ռացիոնալաց-ման եյությունը։ Բանվոր դասակարգի նյութական դրության վատթարացումը. գործազրկությունը վոր-պես կապիտալիստական ռացիոնալացման արդյունք։ Արևելքի ճնշված ժողովուրդների ազգային-ազատա-գրական պայքարն իմպերիալիզմի դեմ։ Բանվորական մասսաների ձախացումը։ Սոցիալ-դեմոկրատիայի դա-վաճանական դերը և պայքար նրա դեմ։

2. ԽՍՀՄ-Ն և կապիտալիստական աշխարհը։ Կա-պիտալիզմի ներքին և արտաքին հակասությունների աճումը։ Նոր իմպերիալիստական պատերազմի նախա-պատրաստությունը։ Նոր պատերազմի սպառնալիքը և այդ դեպքում ԽՍՀ Միության դեմ լինելիք ինտերվեն-ցիայի անխուսափելիությունը։ ԽՍՀՄ խաղաղության քաղաքականությունը։ Կոմունիստական կուսակցու-թյունների հիմնական խնդիրներն են — կռվել պատերազ-մի դեմ ևհամախմբել միջազգային պրոլետարիատը նոր պատերազմների դեմ պայքարելու և համաշխարհային հեղափոխության հիմունք ԽՍՀ Միությունը պաշտ-պանելու համար։ ԽՍՀՄ պաշտպանունակությունն ամ-

բաղնդումը։ Բանվորների կանանց մասնակցությունը երկրի պաշտպանության մեջ։ Ժամանակակից կացությունը Արևելքում և Արևմուտքում*)։

---

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ ԿԻՑ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒՀԻՆԵՐԻ, ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ԵՎ ՄԱՆՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ

### ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՑ

Տնայնագործական արդյունաբերության նշանակությունը խորհրդային երկրի տնտեսության մեջ

*Մանր-տնայնագործական արդյունաբերությունը ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ այն նշանակությունն ունի, որ նա լրացուցիչ դեր է խաղում խոշոր պետական արդյունաբերության նկատմամբ և վաստակի աղբյուր հանդիսանում բանվորական ուժի նշանակալից մի մասի համար, մանավանդ գյուղում (համեմատել պետական արդյունաբերության հետ և բերել տվյալներ ըստ ֆիզիկական անձերի թվի և ըստ արտադրանքի)։*

*Տնայնագործական արդյունաբերության կապը գյուղատնտեսության հետ։*

*Ազգային ռայոնների տնայնագործական արդյունաբերությունը. կանանց արհեստագործությունը։*

---

*) *Այս թեման կարելի յե անցնել միջազգային բնույթ կրող վորևէ խոշոր դեպքի կապակցությամբ և կամ մարտի 8-ի և մայիսի 1-ի տոնակատարությունների ժամանակ։*

Տնայնագործական արդյունաբերության զարգացման հնգամյա պլանի հիմնական թվերը։

Տնայնագործի իրավական դրությունը և հարկային արտոնությունները։

## ՉՈՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

### Տնայնա-արհեստագործական կոոպերացիան որպես բաժան-բաժան մանր արդյունաբերության հասարակայնացման միջոց

*Արհեստագործական կոոպերացիան որպես մանր տնայնա-արհեստագործական արդյունաբերությունը երկրի ընդհանուր ժողովրդական տնտեսության մեջ ներգրավելու և նրան դեպի սոցիալիստական հունն ուղղելու միջոց։*

*Տնայնագործուհիների կոոպերացման հասարակական-քաղաքական նշանակությունը. արհեստագործական կոոպերացիան նրանց տնտեսական և կենցաղային ազատագրման միջոցն է։*

*Կոոպերացված տնայնագործների թիվը և նրանց կազմակերպման ձևերը։ Ստորին խավերի և միության փոխհարաբերությունները։*

*Արհեստագործական կոոպերատիվի կազմակերպությունը։*

*Արհեստագործական կոոպերատիվի վարչական և վերահսկիչ մարմինները—վարչությունը, վերահսկիչ հանձնաժողովը, խորհուրդը։*

*Չքավորության կոոպերացումը որպես հիմնական քաղաքական խնդիր։*

*Ձքավորական ֆոնդերի կազմակերպումն ու օգտագործումը։ Վարկային և տնտեսական աշխատանքներին չքավորության շահերի տեսակետից ուղղության տալու անհրաժեշտությունը։ Դիֆֆերենցիալ վարձը։*

*Ընտանիքի յերկրորդ անդամի կոոպերացումը։*

*Կոոպերացիան վորպես մասնավոր կապիտալի դեմ կռվելու միջոց։*

*Պայքար կեղծ կոոպերատիվների դեմ։*

## ՅԵՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

### Արհեստագործական կոոպերացիայի տնտեսական աշխատանքն ու պլանավորումը։

*Հում նյութի և կիսաֆաբրիկատների մատակարարման կարգը դեֆիցիտային հումույթ գործածող արհեստագործությունների մեջ։ Հումույթի և կիսաֆաբրիկատների ընդհանուր պակասը։ Հումույթը խնայողաբար գործածելու անհրաժեշտությունը։ Զանազան տեսակի մաշվածքների և նետվող փշրանքների օգտագործումն ու արտադրությունը։*

*Տեղական հում նյութեր գործածող արհեստագործական ճյուղերի, հատկապես փայտա-տնայնագործական ճյուղերի զարգացման և շինարարական նյութերի արտադրության անհրաժեշտությունը: Տեղական շուկայում պահանջվող ապրանքների վաճառահանումը։ Տնայնագործների և տնայնագործուհիների վաստակը բարձրացնելու միջոցները։ Մշակվող ապրանքների ծախքերի, ավելադրումների և գների իջեցման միջոցները։ Տնայնագործական արտադրանքների վորակի լավացումը։*

*Խորհրդային վաղ ժողտնտեսության և նրա յուրաքանչյուր առանձին կազմակերպության պլանի նշանակությունը։*

*Տարեկան և հնգամյա պլանների կազմությունը։*

**ՉՈՐՐՈՐԴ ԴՐՈՒՅԹ**

Արդյունաբերական կոոպկազմակերպությունների սեփական միջոցները

*Սոբեսային տրամադրությունների* (собесничество) *դեմ կռվելու անհրաժեշտությունը։*

*Սեփական միջոցների կուտակումը որպես արհեստագործական կոոպերացիայի, հատկապես նրա տեխնիկական վերասարքավորման զարգացման անհրաժեշտ պայման։*

XV *համագումարի և կուսակցության Կենտկոմի սեպտեմբերի 3-ի դիրեկտիվներն արհեստագործական կոոպերացիայի սեփական միջոցների կուտակման մասին։ Փայային կապիտալները որպես սեփական միջոցների կուտակման հիմունք. փայավճարները, նըրանց չափերը, դիֆերենցիալ փայավճարը, ավանդները։ Համույթային կապիտալներ. մեքենայացման Պահեստի կապիտալները և յերկարատև վարկավորման ֆոնդերը։ Կատակի բաշխումը։ Սեփական միջոցների կուտակման հնգամյա պլանի հիմնական թվերը։*

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՐՈՒՅԹ

### Տնայնա արդյունագործական տեխնիկայի բարձրացումը

*Ցած տեխնիկան և բանվորի արտադրողականությունը տնայնագործական արդյունաբերության մեջ։ Համեմատություն պետական արդյունաբերության հետ ցած տեխնիկայի ազդեցությունը ապրանքի վորակի և գնի վրա․ չերկարատև բանվորական որ և տնայնագործի ցած աշխատավարձը։ Արհեստագործական կոոպերացիայի միջոցով տնայնագործական արդյունաբերության տեխնիկան բարձրացնելու անհրաժեշտությունը։*

*Արհեստագործական կոոպերացիայի ընդհանուր արհեստանոցների և այնտեղ աշխատող բանվորների քանակը։*

*Անգործ մնացած ձեռնարկությունների և ազատված սարքավորման հանձնումը տնայնա-արդյունագործական կոոպերացիային պետական արդյունաբերության միջոցով։ Արհեստագործական կոոպերացիայի կապիտալ շինարարությունը։*

*Արհեստագործական կոոպերացիայի՝ տեխնիկայի բարձրացման ասպարեզում կատարած նվաճումների օրինակներ։*

*Կատարելագործված ճախարակը վորպես տեխնիկայի զարգացման օրինակ տանը աշխատող տնայնագործուհիների համար։*

## ՎԵՑԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Տնայնագործների վորակավորման բարձրացումը։ Կուլտուր-կենցաղային աշխատանքը յեվ տնայնագործների ու տնայնագործուհիների միջեվ դաստիարակությունը

*Տնայնագործական արդյունաբերության և արհեստագործական կոոպերացիայի աշխատակիցների, հատկապես կին-աշխատակիցների վորակավորման ցածր մակարդակը։ Վորակավորյալ բանվորական ուժի պատրաստության անհրաժեշտությունը։ Աշակերտությունը։*

*Պրոֆտեխնիկական կրթությունը — ուսումնացուցադրական արհեստանոցներ, հրահանգիչների պրոֆտեխնիկական դպրոցներ, տնայնագործական տեխնիկումներ։*

*Ուսումնական հիմնարկների ընդունելության կարգը — սովորողների գործուղումն ու թոշակավորումը պետական ու կոոպերատիվ հիմունքներով։ Հեռակա ուսուցումը։*

*Տնայնագործների կուլտ-աշխատանքի կազմակերպությունն ու խնդիրները։ Անգրագիտության վերացումը վորպես հարվածային խնդիր։ Կոոպերատիվ-արտադրական պրոպագանդը։ Հասարակական-քաղաքական դաստիարակությունը։*

*Կադրերի նախապատրաստությունը։ Աշխատանքը կին-ակտիվի հետ — խորհրդակցություններ, կոնֆերանսներ, համագումարներ, պատգամավորական*

ժողովներ։ Տնայնագործուհիների առաջքաշումը վարչությունների և վերահսկիչ հանձնաժողովների մեջ։

Արհեստագործական կոոպերացիայի աշխատանքը տնայնագործուհիների կենցաղի սպասարկման և բարվոքման գործում—մսուրների, մանկական հրապարակների, ճաշարանների և հանրակացարանների կազմակերպությունը։ Արհեստագործական կոոպերացիայի փոխօգնության դրամարկղները և նրանց աշխատանքը տնայնագործուհիների սպասարկման ուղղությամբ (հանգստյան տներ, հիվանդանոցներ, սոցիալական ապահովություն հիվանդությունների, հաշմանդամության, հղիության և այլ տիպի աշխատազրկման դեպքերի դիմաց)։

## ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՊԼԱՆ

### I ԹԵՄԱ

### Ինչո՞ւ գիտությունն ու կրոնը անհամատեղելի յեն

1. Աստվածահավատության ծագումը։ Վայրենիների մտապատկերները շրջակա միջավայրի և բնության յերևույթների մասին։ Մեռած նախահայրերի աստվածացումը և բնության ուժերի յերկրպագությունը։ Զոհաբերությունները։ Հրաշքների հավատքը։

2. Քրիստոնեական ուսմունքը աշխարհի մասին։ Քրիստոնեյությունն իր կրոնական ուսմունքը փոխ է առել նախորդ՝ այսպես կոչված՝ «հեթանոսական» կրոններից (սուրբ յերրորդություն, աստվածամոր անարատ հղության առասպելը, տառապող և հարություն առնող աստուծո դիցաբանությունը)։

3. Կրոնն ի պաշտպանություն շահագործողների և հարստահարողների շահերի։ Ճնշվածները հնազանդության մեջ են պահվում անգո աստուծո անվան, հանդերձյալ կյանքից զգացած վախի և յերկնային բարիքների սուտ խոստումների միջոցով։

4. Կրոնի պայքարը գիտության և գիտական գործիչների դեմ։ Յեկեղեցու հսկողությունը դպրոցի վրա։

5. Գիտությունը աշխատանքային գործունեության մեջ կիրառելիս մարդն իշխանություն է ձեռք բերում բնության վրա։ Ինչպես է օժանդակում գիտությունը բերքի առատացմանը, ինչ է տալիս գիտությունը անասունների և հավերի խնամքի մասին։ Գիտությունն ու կրոնը մարդու առողջության և հիվանդությունների մասին։ Ինչպիսի վնաս է բերում զանազան սրբերին հավատալը։ Կրոնը մթագնում է աշխատավորների գիտակցությունը և թուլացնում նրանց կամքը նոր կյանքի համար մարտնչելու ընթացքում։ Նոր հասարակակարգ կերտելու համար մարտնչելը ասել է՝ մարտնչել կրոնի դեմ, հանուն գիտության։

## II ԹԵՄԱ.

**Ինչու պետք է կռվել կրոնի դեմ**

1. Կրոնը վորպես աշխատավորների, հատկապես կանանց ստրկացման միջոց։

Ինչպիսի դեր եր խաղում յեկեղեցին նախքան հեղափոխությունը՝ վորպես կապիտալի հավատարիմ սպասավոր, և հեղափոխությունից հետո՝ վորպես խորհ-

ներքային իշխանության դեմ կռվելու միջոց։ Դասակարգային կռվի սրումը քաղաքում և գյուղում առանձին ակտիվություն և առաջ բերում յեկեղեցականների և աղանդավորների մեջ։

2. Ժողովրդական տնտեսության հնգամյա պլանը նշանակում է սոցիալիզմի աճում, կապիտալիստական տարրերի հետագա վտարում և աշխատավորության լայն մասսաների, վորոնց թվում նաև բանվորուհիների և գեղջկուհիների ներգրավումը սոցիալիզմի կառուցման մեծ աշխատանքների մեջ։ Կրոնը թուլացնում է աշխատավորների կամքը, արգելակում է կանանց լայն մասսաների ներգրավումը շինարարության աշխատանքներում և կտրում նրանց յերկրավոր գործերից՝ «յերկնային դրախտի» հույսեր պատճառելով։ Յեկեղեցին ակնհայտ վնասարարության ասպարեզում (լրտեսություն, առարկություններ տոն որերում աշխատելու մասին և այլն)։

3. Յեկեղեցականների և աղանդավորների աշխատանքի մեթոդները կիսագիտակից մասսաները նվաճելու խնդրում և կանանց իրենց ազդեցությամբ համակելու ձգտումները (կրոնական կազմակերպությունների մեջ ներգրավելու ճանապարհով)։

4. Սոցիալիստական հասարակության ակտիվ մասնակից կարող է լինել միայն նոր, կուլտուրական և ուժեղ կամքի տեր մարդը։ Հոգևորականությունը ձգնում է հնապահպանության մեջ պահել կնոջը և օգտագործել նրան՝ ընտանիքի, հասարակության և տնտեսության վրա կրոնական-բուրժուական ազդեցություն ծավալելու նկատառումներով։

5. Շինարարության հնգամյա պլանի կատարումը սերտորեն կապված է կրոնի դեմ անխնա պայքար մղելու անհրաժեշտության հետ։ Կինը, որ ամենից ավելի սուր կերպով է զգում անցյալի ժառանգությունը, պետք է լինի հակակրոնական ակտիվ մարտիկների շարքերում։ Կրոնի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է, որ կինը լայն մասնակցություն բերի սոցիալիստական շինարարության և հասարակական կյանքի, քաղաքական և կուլտուրական գրագիտության բարձրացման և կրոնի դասակարգային էության ու հակահեղափոխական գործունեության հայտաբերման և մերկացման բոլոր աշխատանքներին։ Անաստվածների միությունները այդ պայքարի շտաբն են հանդիսանում։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Բանվորուհիների պատգամավորական ժողովի ծրագրի համար**

1. Նարլիկ — *Ցեխային բջիջը (ռուս.)*
2. Տ. Ի. Ռիկով — *Յերկրի տնտեսական դրությունը (հայ.)։*
3. Նալինին — *Գյուղատնտեսության զարգացման ուղիները (ռուս.)։*
4. Ռլասով — *Լենինի կոոպերատիվ ծրագիրը (ռուսերեն)։*
5. Վ. Լինովարով. — *Կոոպերացիայի այբուբենը, (հայերեն)։*
6. Եզեյման — *Կոոպերացիան և բանվորական ընտանիքի կենցաղը (ռուս.)։*
7. Մ. Տոմսկի. — *Միշտ մասսաների հետ, մասսաների առաջ (ռուս.)։*
8. Որջոնիկիձե. — *ԲԳՏ և արհմիությունները ապպարատի բարելավման պայքարում (ռուս.)*

9. **Կազարնովիչ.** — *Կուսակցությունն ու խորհուրդները (ռուս.)։*

10. **Ռազամնոյովա.** — *Բանվորուհին քաղխորհրդի սեկցիաներում։*

11. **Ցարողայովսկի.** — *Փոխանցման շրջանում պրոլետարիատի կենցաղն ու բարոյականությունը (ռուս.)։*

12. **Ա. Խանջյան.** — *Հայաստանի կոմկուսի աճման խնդիրները (հայերեն)։*

---

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0045214

[204]

A I/8359